ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

« » ___________ 2014թ. ք. ԵՐԵՎԱՆ N _________

**«ՀՀ ԿԱ ԱԱԾ – ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1 - ԳԱԿ- ԾՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով էլեկտրոնային շրջանակային ընթացակարգի հրավեր**

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով էլեկտրոնային շրջանակային ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Ծառայությունների մատուցման պայմաններն են՝ ք. Երևան:

Հայտնում ենք Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել armeps.am համակարգով՝ մինչև **2014թ. փետրվարի 28-ը, ժամը 10 $^{30}$-ն:**

Հայտերը կբացվեն armeps.am համակարգում՝ 2014թ. **փետրվարի 28-ը, ժամը** 10 $^{30}$-ն: Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը /**Հավելված** 1/ և գնային առաջարկը /**Հավելված** 2/: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **սույն հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքով** սահմանված կարգով:

**«Գնումների մասին» ՀՀ օրենքով** սահմանված տեղեկություններ ստանալու համար դիմել հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Բաբայանին /հեռ. 579-599/:

Առդիր՝ 9 թերթից:

Հարգանքով՝

ՊԵՏ՝ Մ. Ղարաջյան

*Հավելված 1*

**«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

**«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի**

**գնահատող հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն**

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

______________________________________________-ն հայնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ ԿԱ ԱԱԾ տնտեսական վարչության կողմից **«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11»**ծածկագրով հայտարարված ընթացակարգի ________________________ չափաբաժնին /չափաբաժիններին/ և հրավերի /ծանուցման/
Չափաբաժնի /չափաբաժինների/ համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

__________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1/ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2/ համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

________________________________________-ն հայնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

______________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

______________________________________________:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

______________________________________________ ____________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

________________________________2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված2*

**«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

**«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի**

**գնահատող հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն**

## Գ ն ա յ ի ն  ա ռ ա ջ ա ր կ

*Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ________________________________________-ն*

Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

**առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ միավորի գների՝**

| Չափ-ըի h/h | Գնման առարկայի անվանումը | Արժեքի հաշվարկ | | Առաջարկված միավորի գինը ԱԱՀ-ով /թվերով և տառերով/ | Առաջարկված միավորի գինը առանց ԱԱՀ-ի /թվերով և տառերով/ |
|---|---|---|---|---|---|
| | | Արժեք* | ԱԱՀ-ն** | | |
| 1 | 2 | *3* | *4* | *5* | *6* |
| 1 | երկար ձեռնոցներ | | | | |
| 2 | անջրանցիկ կոշկեղեն | | | | |
| 3 | ապրանքների փաթեթավորման տոպրակներ | | | | |
| 4 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | | | | |
| 5 | լուսարձակներ | | | | |
| 6 | լուսարձակներ | | | | |
| 7 | սնդիկային լամպեր | | | | |
| 8 | սնդիկային լամպեր | | | | |
| 9 | դյուրակիր էլեկտրական լամպեր | | | | |
| 10 | դյուրակիր էլեկտրական լամպեր | | | | |
| 11 | արտաքին լուսավորման լամպեր | | | | |
| 12 | էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | | | | |
| 13 | էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | | | | |
| 14 | ցերեկային լամպ 60սմ | | | | |
| 15 | լամպերի և լուսավորման սարքավորումների մասեր | | | | |
| 16 | լամպերի և լուսավորման սարքավորումների մասեր | | | | |
| 17 | լամպերի ստարտերներ | | | | |
| 18 | լամպերի դրոսելներ | | | | |
| 19 | լամպերի դրոսելներ | | | | |
| 20 | մեկուսիչ ժապավեններ օղակաձև | | | | |
| 21 | էլեկտրական ապահովիչ, միաֆազ, 32Ա | | | | |
| 22 | եռաբաշխիչ | | | | |
| 23 | վարդակ երկբևեռանի | | | | |
| 24 | խրոց | | | | |
| 25 | նստատեղերի մասեր | | | | |
| 26 | նստատեղերի մասեր | | | | |
| 27 | զուգարանի խոզանակներ | | | | |
| 28 | պլաստմասայից դույլ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | պլաստմասայից դույլ | | | | |
| 30 | աղբարկղեր, պլաստմասայից | | | | |
| 31 | աղբարկղեր, մետաղյա | | | | |
| 32 | ուղղահայաց շերտավարագույրներ | | | | |
| 33 | մաքրող կտորներ | | | | |
| 34 | ջեռուցման սարքեր | | | | |
| 35 | սպունգ սանիտարահիգիենիկ | | | | |
| 36 | հատակ մաքրելու ձող | | | | |
| 37 | ավել | | | | |
| 38 | գոգաթիակ, աղբը հավաքելու համար ձողով | | | | |
| 39 | ծորակներ կամ փականներ | | | | |
| 40 | ծորակներ կամ փականներ | | | | |
| 41 | խողովակաշարերի փականներ | | | | |
| 42 | խողովակաշարերի փականներ | | | | |
| 43 | ծորակների և փականների մասեր | | | | |
| 44 | խողովակներ | | | | |
| 45 | խողովակներ | | | | |
| 46 | ներկագլանիկ, ներկարարական աշխատանքների համար | | | | |
| 47 | ջրի ծորակ, փական | | | | |
| 48 | ջրի ծորակ, 2 փականով | | | | |
| 49 | սանհանգույցի բաքեր | | | | |
| 50 | ձեռքի գործիքներ | | | | |
| 51 | ձեռքի գործիքներ | | | | |
| 52 | ձեռքի գործիքներ | | | | |
| 53 | բահեր և գոգաթիակներ | | | | |
| 54 | բահեր | | | | |
| 55 | ձեռքի սղոցներ | | | | |
| 56 | տարատեսակ ձեռքի գործիքներ | | | | |
| 57 | սեղմիչ աքցաններ | | | | |
| 58 | մուրճեր | | | | |
| 59 | փականներ | | | | |
| 60 | կողպեքների մասեր | | | | |
| 61 | փականների մասեր | | | | |
| 62 | լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | | | | |
| 63 | լվացքի փոշի ավտոմատ | | | | |
| 64 | օճառ | | | | |
| 65 | ռուլոնով, զուգարանի թուղթ | | | | |
| 66 | կահույքի փայլեցման միջոց | | | | |
| 67 | մաքրող մածուկներ և փոշիներ | | | | |
| 68 | մաքրող նյութեր | | | | |
| 69 | կծու (կաուստիկ) մաքրող նյութեր | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 70 | սեղանի անձեռոցիկներ | | | | |
| 71 | լվացող նյութեր | | | | |
| 72 | լվացող նյութեր | | | | |
| 73 | լվացող նյութեր | | | | |
| 74 | լվացող նյութեր | | | | |

***3-րդ սյունյակում նծված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

**** Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

____________________________________________ ____________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________________2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆՄԱՆ**
**N ԱՊԶԲ - 11/ -2014**

**ք. Երևան** **«-----» ---------------- 2014թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև` Գնորդ), մի կողմից, և ________________________________________ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն ______________________________ ________ -ի (այսուհետև` Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի Տնտեսական, Սանիհիգիենիկ և Լվացքի միջոցներ (այսուհետև` Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և շարունակվում է մինչև 2014 թ-ի դեկտեմբերի 10-ը:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին` ք. Երևան, Արին-Բերդի 5-րդ նրբ. հասցեով:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան` բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

### 3.1 Գնորդն իրավունք ունի`

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն` Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայյամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

### 3.2 Գնորդը պարտավոր է`

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև սույն պայմանաղրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ ______________________________________________ ______________________ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի **N 2 հավելվածում:** Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **N 2 հավելվածով՝** վճարման ժամանակացույցով նախատեսված եռամսյակում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները բավարարում են: Դեկտեմբեր ամսվա վճարումը կիրականացվի մինչև 25.12.2014թ.:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման–ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ **(Հավելված N 3)**:

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2014թ.:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները /խնայողություններ/ և /կամ/ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած 11 /տասնմեկ/ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԱ ծառայություն** | ________________________________ |
| **ք.Երևան, Նալբանդյան104** | ________________________________ |
| **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | ________________________________ |
| **Հ/հ 900011301067** | **Հ/հ** ____________________________ |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ** __________________________ |

**Տնօրենի տեղակալ**

**Ա. Հակոբյան**

Հավելված 1
«___» ______________ 2014թ. կնքված
N ______________________
ապրանքների մատակարարման պայմանագրի

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն    Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ե Ր Ը

| Չափ-րի h/h | Կոդեր | Ապրանքի անվանումը | Չ/մ | Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ | Այլ պահանջներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| 1 | 18424500/1/4/2 | երկար ձեռնոցներ | զույգ | Սանիտարական ձեռնոցներ ռետինե, ԳՕՍՏ 20010-93 կամ համարժեք | |
| 2 | 18811000/1/4/2 | անջրանցիկ կոշկեղեն | զույգ | Ռետինե երկարաճիտ կոշիկներ տարբեր չափսերի | |
| 3 | 18937000/1/4/5 | ապրանքների փաթեթավորման տոպրակներ | տուփ | Աղբի պոլիէթիլենային տոպրակ 20 կգ | |
| 4 | 19641000/1/4/2 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | հատ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար: | տարողությունը 30կգ |
| 5 | 31518100/1/4/2 | լուսարձակներ | հատ | Ցերեկային լույսի լուսատու Լ-60 սմ, լամպերով | |
| 6 | 31518100/2/4/2 | լուսարձակներ | հատ | Ցերեկային լույսի լուսատու Լ-120 սմ, լամպերով | |
| 7 | 31518500/1/4/2 | սնդիկային լամպեր | հատ | Արտաքին լուսավորության էլ. լամպ /Մազդա 250 Վտ կամ համարժեք/ | |
| 8 | 31518500/2/4/2 | սնդիկային լամպեր | հատ | Արտաքին լուսավորության էլ. լամպ /Մազդա 400 Վտ կամ համարժեք/ | |
| 9 | 31521300/1/4/2 | դյուրակիր էլեկտրական լամպեր | հատ | էլ. լամպ 60 վտ, կախովի առաստաղի համար, տանձաձև <Ֆիլիպս> կամ համարժեք | |
| 10 | 31521300/2/4/2 | դյուրակիր էլեկտրական լամպեր | հատ | էլ. լամպ 100 վտ, կախովի առաստաղի համար տանձաձև <Ֆիլիպս> կամ համարժեք | |
| 11 | 31527200/1/4/4 | արտաքին լուսավորման լամպեր | լրակազմ | Արտաքին լուսավորության լուսարձակ դրոսելով և լամպով | |
| 12 | 31531210/1/4/2 | էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | հատ | Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 60 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի: | 60W |
| 13 | 31531210/2/4/2 | էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | հատ | Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի: | 100W |
| 14 | 31531500/1/4/2 | ցերեկային լամպ 60սմ | հատ | Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 60 սմ երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված Ցածր լարման | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի: | |
| 15 | 31532000/1/4/2 | լամպերի և լուսավորման սարքավորումների մասեր | հատ | Միկրոսխեմա 1,2 ամ  40 վտ, նախատեսված ցերեկային լուսատուների համար | |
| 16 | 31532000/2/4/2 | լամպերի և լուսավորման սարքավորումների մասեր | հատ | Էլ. արտաքին լուսավորության լամպերի ԻՋՈՒ 250 վտ | |
| 17 | 31532500/1/4/2 | լամպերի ստարտերներ | հատ | Ստարտյոր S 2, S 10,  նախատեսված L 60-120 սմ լուսատուների համար | |
| 18 | 31532600/1/4/2 | լամպերի դրոսելներ | հատ | Դրոսել 40W 220/240 V 50160Hz YZ 40ZHG, նախատեսված 60X60 ցերեկային լուսատուի համար | |
| 19 | 31532600/2/4/2 | լամպերի դրոսելներ | հատ | Էլ. արտաքին լուսավորության լամպերի դրոսել 250 վտ | |
| 20 | 31651100/1/4/2 | մեկուսիչ ժապավեններ օղակաձև | հատ | Հոսանքի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի: | |
| 21 | 31681610/1/4/2 | էլեկտրական ապահովիչ, միաֆազ, 32Ա | հատ | Հալուն ապահովիչ՝ 32 Ա անվանական հոսանքով, լարումը՝ 220 Վ: Նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի պաշտպանության համար: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի: | |
| 22 | 31683000/1/4/2 | եռաբաշխիչ | հատ | Էլ. եռաբաշխիչ եռոտանի մուտքով | |
| 23 | 31684100/1/4/2 | վարդակ երկբևեռանի | հատ | Վարդակ 1 կամ 2 տեղանոց պլաստմասե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 МОм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 ́C-ից մինչև  +80 ́C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝  ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ,Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե: | |
| 24 | 31686000/1/4/2 | խրոց | հատ | Էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | Ոտնակները հաստ նախատեսված արտասահմա-նյան վարդակների համար |
| 25 | 39114000/1/4/2 | նստատեղերի մասեր | հատ | Աշխատանքային բազկաթոռի մեղմիչ, 80-120 սմ | |
| 26 | 39114000/2/4/2 | նստատեղերի մասեր | հատ | Աշխ. բազկաթոռի պլաստմասե անիվներ | |
| 27 | 39224310/1/4/2 | զուգարանի խոզանակներ | հատ | Զուգարանակոնքի խոզանակ | |
| 28 | 39224331/1/4/2 | պլաստմասայից դույլ | հատ | Պլաստմասե, 10 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ | 10 լ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի: | |
| 29 | 39224331/2/4/2 | պլաստմասայից դույլ | հատ | Պլաստմասե, 10 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի: | 10 լ օվալաձև |
| 30 | 39224341/1/4/2 | աղբարկղեր, պլաստմասայից | հատ | Զամբյուղատիպ, պլաստմասե, 10 դմ3 տարողությամբ: | |
| 31 | 39224342/1/4/2 | աղբարկղեր, մետաղյա | հատ | Աղբարկղը բաղկացած է 2 մասից՝ արտաքին ձևավոր թիթեղից և ներքին թիթեղյա արկղից: Աղբարկղի արտաքին մասի թիթեղների հաստությունը՝ 0,6 մմ, ներքին արկղի թիթեղի հաստությունը՝ 0,5 մմ: Աղբարկղի արտաքին մասի գույնը՝ շագանակագույն, իսկ կափարիչը և ներքին արկղը՝ սև: Կափարիչը արկղի արտաքին մասին ամրանում է 2 մետաղյա օղակներով, իսկ ներքին արկղի վրա նախատեսվում է մետաղալարից բռնակ: | ոտնակով |
| 32 | 39515440/1/4/10 | ուղղահայաց շերտավարագույրներ | մ2 | Ուղղահայաց, հատուկ մշակված կտորից կամ պոլիմերային նյութերից, ալյումինե քիվով, երկու կողմից հավաքովի: | 9սմ լայնությամբ, չափագրումով և տեղադրումով |
| 33 | 39525800/1/4/5 | մաքրող կտորներ | տուփ | Փոշին մաքրող գործվածքներ /ջնջոց/ | |
| 34 | 39715200/1/4/2 | ջեռուցման սարքեր | հատ | Էլ. տեն 1.2 կվտ կոած վիճակում | |
| 35 | 39831271/1/4/2 | սպունգ սանիտարահիգիենիկ | հատ | Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, խորանարդաձև կամ ուղղանկյուն, (15x20) սմ չափի, հաստությունը՝ 3 սմ կամ այլ չափերի: | |
| 36 | 39835000/1/4/2 | հատակ մաքրելու ձող | հատ | 1,5-2 մ երկարության, փայտե կամ պլաստմասե, լաքապատված: | |
| 37 | 39836000/1/4/2 | ավել | հատ | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90)սմ, ավլող մասի լայնքը (35-40)սմ: | |
| 38 | 39839100/1/4/2 | գոգաթիակ, աղբը հավաքելու համար ձողով | հատ | Մետաղյա, հաստությունը՝ 0,8 մմ, 1 մ երկարությամբ ձողով: | |
| 39 | 42131000/1/4/2 | ծորակներ կամ փականներ | հատ | Տարբեր տիպերի 35, 28 ՄՊա անվանական ճնշման, աշխատան-քային գոտու 443 (170), 373 (100) բարձրացված և 213 (-60) K ($^{0}$C) ցածրացված աշխատանքային ջերմաստիճանով, 15-80 մմ տրամագծով, պատի | Պատից ամրացվող |
| 40 | 42131000/2/4/2 | ծորակներ կամ փականներ | հատ | Ջրի փականներ, համապատասխան չափերի, "Արկո" կամ համարժեք | |
| 41 | 42131120/1/4/2 | խողովակաշարերի փականներ | հատ | Ջրի փական ¾ ույմ | |
| 42 | 42131120/2/4/2 | խողովակաշարերի փականներ | հատ | Ջրի փական ½ դույմ | |
| 43 | 42132000/1/4/2 | ծորակների և փականների մասեր | հատ | Ջրի փականի միջուկ տարբեր չափերի | |
| 44 | 44141000/1/4/2 | խողովակներ | հատ | Ճկվող խողովակ մետաղե 45 սմ, արտասահմանյան արտադրության | |
| 45 | 44141000/2/4/2 | խողովակներ | հատ | Ճկվող խողովակ մետաղե 60 սմ, արտասահմանյան արտադրության | |
| 46 | 44192700/1/4/2 | ներկագլանիկ, ներկարարական աշխատանքների համար | հատ | Ներկարարական աշխատանքների համար, փայտե կամ պլաստմասե պոչով, բնական կամ արհեստական | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | մազերից պատրաստված, խավի երկարությունը 8-ից մինչև 25 մմ, պատրաստված միասեռ նյութից, խավի հավասար բարձրությամբ, հոլովակի երկարությունը՝ համապատասխան չափերի: | |
| 47 | 44411110/1/4/2 | ջրի ծորակ, փական | հատ | Տարբեր չափերի, խառնիչային տիպի: | Լվացարանի համար |
| 48 | 44411120/1/4/2 | ջրի ծորակ, 2 փականով | հատ | Տարբեր չափերի, խառնիչային տիպի: | Լվացարանի համար |
| 49 | 44411750/1/4/4 | սանհանգույցի բաքեր | լրակազմ | Զուգարանակոնքի բաքի պարագաներ | |
| 50 | 44511000/1/4/2 | ձեռքի գործիքներ | հատ | Հարթաշուրթ մեծ չափերի | |
| 51 | 44511000/2/4/2 | ձեռքի գործիքներ | հատ | Այգեգործի մկրատ /Սեկատոր փոքր պոչով/ | |
| 52 | 44511000/3/4/2 | ձեռքի գործիքներ | հատ | Կլորաշուրթ տարբեր չափերի | |
| 53 | 44511100/1/4/2 | բահեր և գոգաթիակներ | հատ | Բահ բետոնե, քարե, սվաղային, սալիկային և գյուղատնտեսական աշխատանքների համար: Բահի շեղբը պետք է պատրաստված լինի У7А, У8А, У9А, У10А մակնիշների պողպատից, կալունակը՝ Ст2, Ст3 մակնիշի պողպատից, կոթը՝ պինդ սաղարթավոր ծառատեսակների փայտանյութից, սուր եզրով, ԳՕՍՏ 9533-81 | |
| 54 | 44511110/1/4/2 | բահեր | հատ | Բահ շինարարական, այգեբանջարանոցային և բեռնման-բեռնաթափման աշխատանքների համար: Բահի շեղբը և գլխիկը պետք է պատրաստված լինեն 30Хգհ, 45, 50, ըհՑ 5, ըհՑ 6 մակնիշների պողպատի նրբաթերթ գլոցվածքից, երկժանին և գլխիկը՝ 10, 15, 20, ըհՑ 2, ըհՑ 3 մակնիշների պողպատի նրբաթերթ գլոցվածքից, դաստակը և կոթը՝ սաղարթավոր ծառատե-սակներից՝ կեչուց, հացենուց, թխկուց, ԳՕՍՏ 19596-87 կամ համարժեք | |
| 55 | 44511500/1/4/2 | ձեռքի սղոցներ | հատ | Փայտի սղոց ձեռքի | |
| 56 | 44512000/1/4/2 | տարատեսակ ձեռքի գործիքներ | հատ | Այգեգործի մկրատ /Սեկատոր մեծ պոչով/ | |
| 57 | 44512210/1/4/2 | սեղմիչ աքցաններ | հատ | Կցաքցան տարբեր չափերի | |
| 58 | 44512300/1/4/2 | մուրճեր | հատ | Մուրճ տարբեր չափերի | |
| 59 | 44521100/1/4/2 | փականներ | հատ | Սեյֆի փական "Էլբոր" կամ համարժեք | |
| 60 | 44522300/1/4/2 | կողպեքների մասեր | հատ | Դռան փականի միջուկ, երկար 7 սմ և ավելի | |
| 61 | 44522400/1/4/2 | փականների մասեր | հատ | Դռան ներդիր փականների բռնակ/ Առչե կամ համարժեք / | |
| 62 | 39831242/1/4/3 | լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | կգ | Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը` 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ | Չափածրարված 450գր գործարանային պոլիմերային պարկերով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: | |
| 63 | 39831243/2/4/3 | լվացքի փոշի ավտոմատ | կգ | Բաղադրությունը՝ մինչև 5 % պոլիկարբօքսիլներ պարունակող կատրիոնային արտաքին ակտիվ (ԱԱՆ) նյութերից, 5-15 % թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30 % անիոնային ԱԱՆ, ֆոսֆատներ, էնզիմներ, օպտիկական սպիտակեցնող նյութերից: Հոտը՝ ըստ կիրառված հոտավորիչի: | Չափածրարված 450գր գործարանային պոլիմերային պարկերով |
| 64 | 39831241/2/4/2 | օճառ | հատ | Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ ,Չեզոքե և ,Էքստրաե տեսակների համար 78 գ, ,Մանկականե և ,Սովորականե տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ ,Չեզոքե տեսակի համար բացակայում է, ,Էքստրաե տեսակի համար՝ 0,2 %, ,Մանկականե տեսակի համար՝ 0,15 %, ,Սովորականե տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) ́C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված ,N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներե սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը: | |
| 65 | 33761000/1/4/2 | ռուլոնով, զուգարանի թուղթ | հատ | Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված “Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”: | |
| 66 | 39812410/1/4/2 | կահույքի փայլեցման միջոց | հատ | Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով: | |
| 67 | 39813000/1/4/2 | մաքրող մածուկներ և փոշիներ | հատ | Ռախշա կամ համարժեք, 0.5 կգ զանգվածներով | |
| 68 | 39831240/2/4/2 | մաքրող նյութեր | հատ | Լամինատ մաքրող միջոց /Էմսալ կամ համարժեք/, 1 լ տարողությամբ | |
| 69 | 39822000/1/4/2 | կծու (կաուստիկ) մաքրող նյութեր | հատ | Սալահատակի մաքրող լվացող և ախտահանող մածուկ «Մաքրուհի» կամ համարժեք: Չշերտավորվող | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | մածկանման զանգված դեղնականաչավուն երանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45 %-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2,5 %-ից ոչ պակաս: Փաթեթավորված պոլիմերային տարայում 0,5 կգ զանգվածով | |
| 70 | 39513200/1/4/2 | սեղանի անձեռոցիկներ | հատ | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված “Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”: | |
| 71 | 39831000/1/4/2 | լվացող նյութեր | հատ | Զուգարանակոնք լվանալու հեղուկ (Утенок силит կամ համարժեք), չափածրարված 0.5 կգ զանգվածներով | |
| 72 | 39831000/2/4/2 | լվացող նյութեր | հատ | Գորգեր լվանալու հեղուկ «Վանիշ» կամ համարժեք, չափածրարված 1 կգ զանգվածներով | |
| 73 | 39831000/3/4/2 | լվացող նյութեր | հատ | Ափսե լվանալու հեղուկ Ժեմչուգ կամ համարժեք, չափածրարված 0.5 կգ զանգվածներով | |
| 74 | 39831000/4/4/2 | լվացող նյութեր | հատ | Ապակի լվանալու հեղուկ «Մերի» կամ համարժեք, չափածրարված 0.5 կգ զանգվածներով | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱԱ ծառայություն
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/h 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

**ՎԱՃԱՌՈՂ**

____________________
____________________
____________________

Հ/h ____________________
ՀՎՀՀ ____________________

Հավելված 2
«___» ______________ 2014թ. կնքված
N ___________________
ապրանքների մատակարարման պայմանագրի

# ԳՆՄԱՆ և ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐ

| **Չափա-բաժնի h/h** | **Ապրանքի անվանումը** | **Չ/մ** | **Քանակը ըստ 2014թ-ի եռամսյակների** | | | | **Ընդհանուր քանակը** | **Միավորի գինը /ՀՀ դրամ/** | **Գումարը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **I** | **II** | **III** | **IV** | | | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** |
| **1** | երկար ձեռնոցներ | զույգ | - | - | 100 | - | 100 | | |
| **2** | անջրանցիկ կոշկեղեն | զույգ | - | - | 20 | - | 20 | | |
| **3** | ապրանքների փաթեթավորման տոպրակներ | տուփ | - | 300 | - | - | 300 | | |
| **4** | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | հատ | - | 870 | 130 | - | 1000 | | |
| **5** | լուսարձակներ | հատ | - | 30 | - | - | 30 | | |
| **6** | լուսարձակներ | հատ | - | 50 | - | - | 50 | | |
| **7** | սնդիկային լամպեր | հատ | - | 100 | - | - | 100 | | |
| **8** | սնդիկային լամպեր | հատ | - | 20 | - | - | 20 | | |
| **9** | դյուրակիր էլեկտրական լամպեր | հատ | - | - | 100 | - | 100 | | |
| **10** | դյուրակիր էլեկտրական լամպեր | հատ | - | - | 200 | - | 200 | | |
| **11** | արտաքին լուսավորման լամպեր | լրակազմ | - | 20 | - | - | 20 | | |
| **12** | էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | հատ | - | 2360 | - | - | 2360 | | |
| **13** | էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | հատ | - | 3390 | - | 1110 | 4500 | | |
| **14** | ցերեկային լամպ 60սմ | հատ | - | 1000 | - | - | 1000 | | |
| **15** | լամպերի և լուսավորման սարքավորումների մասեր | հատ | - | 30 | - | - | 30 | | |
| **16** | լամպերի և լուսավորման սարքավորումների մասեր | հատ | - | 20 | - | - | 20 | | |
| **17** | լամպերի ստարտերներ | հատ | - | 400 | - | - | 400 | | |
| **18** | լամպերի դրոսելներ | հատ | - | 100 | - | - | 100 | | |
| **19** | լամպերի դրոսելներ | հատ | - | 20 | - | - | 20 | | |
| **20** | մեկուսիչ ժապավեններ օղակաձև | հատ | - | - | - | 100 | 100 | | |
| **21** | էլեկտրական ապահովիչ, միաֆազ, 32Ա | հատ | - | - | - | 20 | 20 | | |
| **22** | եռաբաշխիչ | հատ | - | - | 50 | - | 50 | | |
| **23** | վարդակ երկբևեռանի | հատ | - | - | - | 100 | 100 | | |
| **24** | խրոց | հատ | - | - | - | 80 | 80 | | |
| **25** | նստատեղերի մասեր | հատ | - | - | - | 30 | 30 | | |
| **26** | նստատեղերի մասեր | հատ | - | - | - | 100 | 100 | | |
| **27** | զուգարանի խոզանակներ | հատ | - | - | - | 20 | 20 | | |
| **28** | պլաստմասայից դույլ | հատ | - | 150 | - | - | 150 | | |
| **29** | պլաստմասայից դույլ | հատ | - | - | - | 50 | 50 | | |
| **30** | աղբարկղեր, պլաստմասայից | հատ | - | - | - | 20 | 20 | | |
| **31** | աղբարկղեր, մետաղյա | հատ | - | - | - | 10 | 10 | | |
| **32** | ուղղահայաց շերտավարագույրներ | մ2 | - | 100 | 190 | - | 290 | | |
| **33** | մաքրող կտորներ | տուփ | - | 300 | - | - | 300 | | |
| **34** | ջեռուցման սարքեր | հատ | - | - | - | 50 | 50 | | |
| **35** | սպունգ սանիտարահիգիենիկ | հատ | - | - | 100 | - | 100 | | |
| **36** | հատակ մաքրելու ձող | հատ | - | - | 96 | - | 96 | | |
| **37** | ավել | հատ | - | - | 874 | 126 | 1000 | | |
| **38** | գոգաթիակ, աղբը հավաքելու համար ձողով | հատ | - | - | - | 80 | 80 | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | ծորակներ կամ փականներ | հատ | - | - | 20 | - | 20 | | | |
| 40 | ծորակներ կամ փականներ | հատ | - | - | 48 | 2 | 50 | | | |
| 41 | խողովակաշարերի փականներ | հատ | - | - | - | 30 | 30 | | | |
| 42 | խողովակաշարերի փականներ | հատ | - | - | - | 20 | 20 | | | |
| 43 | ծորակների և փականների մասեր | հատ | - | - | - | 30 | 30 | | | |
| 44 | խողովակներ | հատ | - | - | - | 50 | 50 | | | |
| 45 | խողովակներ | հատ | - | - | - | 50 | 50 | | | |
| 46 | ներկագլանիկ, ներկարարական աշխատանքների համար | հատ | - | - | 20 | - | 20 | | | |
| 47 | ջրի ծորակ, փական | հատ | - | 30 | - | - | 30 | | | |
| 48 | ջրի ծորակ, 2 փականով | հատ | - | 15 | - | - | 15 | | | |
| 49 | սանհանգույցի բաքեր | լրակազմ | - | - | 15 | - | 15 | | | |
| 50 | ձեռքի գործիքներ | հատ | - | - | - | 25 | 25 | | | |
| 51 | ձեռքի գործիքներ | հատ | - | - | - | 5 | 5 | | | |
| 52 | ձեռքի գործիքներ | հատ | - | - | - | 5 | 5 | | | |
| 53 | բահեր և գոգաթիակներ | հատ | - | - | - | 20 | 20 | | | |
| 54 | բահեր | հատ | - | - | - | 20 | 20 | | | |
| 55 | ձեռքի սղոցներ | հատ | - | - | - | 5 | 5 | | | |
| 56 | տարատեսակ ձեռքի գործիքներ | հատ | - | - | - | 5 | 5 | | | |
| 57 | սեղմիչ աքցաններ | հատ | - | - | - | 7 | 7 | | | |
| 58 | մուրճեր | հատ | - | - | - | 15 | 15 | | | |
| 59 | փականներ | հատ | - | - | - | 20 | 20 | | | |
| 60 | կողպեքների մասեր | հատ | - | - | - | 20 | 20 | | | |
| 61 | փականների մասեր | հատ | - | - | - | 30 | 30 | | | |
| 62 | լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | կգ | - | 450 | - | - | 450 | | | |
| 63 | լվացքի փոշի ավտոմատ | կգ | - | 315 | - | - | 315 | | | |
| 64 | օճառ | հատ | - | 1000 | - | - | 1000 | | | |
| 65 | ռուլոնով, զուգարանի թուղթ | հատ | - | 1000 | - | - | 1000 | | | |
| 66 | կահույքի փայլեցման միջոց | հատ | - | 50 | - | - | 50 | | | |
| 67 | մաքրող մածուկներ և փոշիներ | հատ | - | 500 | - | - | 500 | | | |
| 68 | մաքրող նյութեր | հատ | - | 200 | - | - | 200 | | | |
| 69 | կծու (կաուստիկ) մաքրող նյութեր | հատ | - | 100 | - | - | 100 | | | |
| 70 | սեղանի անձեռոցիկներ | հատ | - | 500 | - | - | 500 | | | |
| 71 | լվացող նյութեր | հատ | - | 100 | - | - | 100 | | | |
| 72 | լվացող նյութեր | հատ | - | 10 | - | - | 10 | | | |
| 73 | լվացող նյութեր | հատ | - | 1000 | - | - | 1000 | | | |
| 74 | լվացող նյութեր | հատ | - | 400 | - | - | 400 | | | |
| | **Ընդամենը /վճարման ժամանակացույց* ըստ 2014 թ-ի եռամսյակների/** | | | | | | | | | |

**Ծանոթություն՝ * վճարման ժամանակացույցը ներկայացված է ըստ եռամսյակների՝ ոչ աճողական:**
1.Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԱ ծառայություն | ________________ |
| ք.Երևան, Նալբանդյան104 | ________________ |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի | ________________ |
| գործառնական վարչություն | |
| Հ/հ 900011301067 | Հ/հ ________________ |
| ՀՎՀՀ 01507079 | ՀՎՀՀ ________________ |
| Տնօրենի տեղակալ | |

Ա. Հակոբյան

*Հավելված 3*
<<____>> ______________20 թ. կնքված N ______________________
*ծածկագրով գնման պայմանագրի*

Պատվիրատու

hասցե___________________________
hh______________________________
hվhh____________________________

Կատարող

hասցե___________________________
hh______________________________
hվhh____________________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<__>> <<_________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ <<_____________________ >> :

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__ >> <<_____________>> 20 թ.

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ ___________

Պատվիրատուն, ի դեմս__________________________________________________ և Կատարողը՝ ի դեմս____________________________________________, հիմք ընդունելով,որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները,մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<__>> <<_________>> 20 թ-ից <<__>> <<_________>> 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ ծառայության մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)

ազգանուն,անուն__________________

Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

(ստորագրություն)

ազգանուն,անուն__________________

Կ.Տ